ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 26 նոյեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Դ. Խաչատուրյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 1455-Ա որոշմամբ հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, Կառավարության ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Տ .**

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2024 թվականի հուլիսի 25-ին՝ առաջնային առողջապահության որակը բարելավելու, առողջապահության պետական ծախսերի արդյունավետությունը բարձրացնելու և առողջապահական ծառայություններից օգտվելու ֆինանսական խոչընդոտները նվազեցնելու նպատակով:

2. Համաձայնագրով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել հարյուր երկու միլիոն եվրոյի չափով (102,000,000 եվրո) վարկ, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ)՝ Համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու համար:

3. Համաձայնագիրն ունի երեք հավելված և մեկ առդիր, որոնք դրա անբաժան մասն են կազմում՝ **Հավելված 1**. «Ծրագրի նկարագրությունը», **Հավելված 2**. «Ծրագրի իրականացումը», **Հավելված 3**. «Հանձնառությամբ պայմանավորված աստիճանական մարման ժամանակացույց» և **Առդիր**. «Սահմանումները»:

4. Համաձայնագրին կից ներկայացված՝ Արտաքին գործերի նախարարության՝ Համաձայնագրի վավերացման կամ հաստատման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին եզրակացության և ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ծրագրի իրականացումը կարող է նպաստել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) շրջանակներում և համապատասխան միջկառավարական մարմինների շրջանակներում ընդունված բանաձևերի և հռչակագրերի միջոցով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած հանձնառությունների իրագործմանը, որոնք միտված են Առողջության համապարփակ ծածկույթի (UHC) ներդրմանը:

Համաձայնագրին կից ներկայացված՝ Առողջապահության նախարարության՝ Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Վարկային ծրագիրը արդյունքահեն է, այսինքն՝ վարկային գումարից մասհանումներն իրականացվելու են նախապես համաձայնեցված և սահմանված թիրախներին (մասհանման հետ կապակցված ցուցանիշներ՝ ՄԿՑ) հասնելու դեպքում: Վարկային ծրագրի փաթեթի նախապատրաստումը տևել է շուրջ մեկ տարի, և ցուցանիշները մշակվել են Առողջապահության նախարարության, Ֆինանսների նախարարության և Համաշխարհային բանկի համատեղ աշխատանքի և համաձայնեցման արդյունքում:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, ներքոնշյալ պարտավորությունները՝

- վճարել միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի գումարի մեկ քառորդ (0.25%) տոկոսին հավասար չափով (Հոդված II, բաժին 2.03),

• վճարել պարտավորավճար՝ Չառհանված Վարկի մնացորդի տարեկան մեկ քառորդ (0.25%) տոկոսին հավասար չափով (Հոդված II, բաժին 2.04),

• վճարել տոկոսադրույք, որը Կողմնորոշիչ տոկոսադրույքն է գումարած Լողացող սպրեդը կամ այնպիսի տոկոսադրույք, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 (ե) բաժնի (Հոդված II, բաժին 2.05),

• սկսած 2039 թվականի հուլիսի 15-ից մինչև 2049 թվականի հունվարի 15-ը ներառյալ՝ կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին և հուլիսի 15-ին վերադարձնել Վարկի մայր գումարը՝ 5 % մասնաբաժնով (Հոդված II, բաժիններ 2.06, 2.07 և Հավելված 3),

• հայտարարել Ծրագրի մասով Հայաստանի Հանրապետության հանձնառությունը և այդ նպատակով Ծրագիրն իրականացնել Առողջապահության նախարարության միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի և Համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթներին համապատասխան (Հոդված III, բաժին 3.01),

• Ծրագրի իրականացման ընդհանուր պատասխանատվությունը վերապահել Առողջապահության նախարարությանը, ոչ ուշ, քան Ուժի մեջ մտնելու ամսաթվից մեկ (1) ամիս հետո ստեղծել Բանկի համար ընդունելի մանդատով, կազմով և ռեսուրսներով Տեխնիկական աշխատանքային խումբ, որը պատասխանատու կլինի Ծրագրի համակարգման և Ծրագրի իրականացման դյուրացման համար, և ոչ ուշ, քան Ուժի մեջ մտնելու ամսաթվից մեկ (1) ամիս հետո, եթե Բանկի և Հայաստանի Հանրապետության միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Կառավարության որոշմամբ նշանակել Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ (ԱԾԻԳ) և Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում վարել դրա աշխատանքը, որը պատասխանատու կլինի Ծրագրի իրականացման համար, կունենա համապատասխան անձնակազմ ու ռեսուրսներ և կգործի Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն, պատասխանատու կլինի նաև Ծրագրի գործողությունների ամենօրյա համակարգումն իրականացնելու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 1),

• ապահովել, որ ոչ մի Մասնակից տարածաշրջան իրավասու չլինի Վարկային միջոցներից ֆինանսավորվելու համար, քանի դեռ և եթե Հայաստանի Հանրապետությունը Առողջապահության նախարարության միջոցով յուրաքանչյուր Մասնակից տարածաշրջանի հետ չի կնքել Բանկի համար ընդունելի՝ Մասնակցության մասին համաձայնագիր՝ Հայաստանի Հանրապետությունում Ծրագիրն իրականացնելու պարտավորությունը կատարելու նպատակով Մասնակից տարածաշրջանի համար Ծրագրով նախատեսված հատուկ պահանջներ սահմանելու համար (Հավելված 2, բաժին I, կետ «Ա», ենթակետ 2),

• Առողջապահության նախարարության միջոցով ընդունել Բանկի համար ընդունելի Ծրագրի գործառնությունների ձեռնարկը և այնուհետև ապահովել, որ Ծրագիրն իրականացվի համաձայն այդ ձեռնարկի, որով սահմանվում են Ծրագրի իրականացման համար ինստիտուցիոնալ, վարչարարական, ֆինանսական, տեխնիկական և գործառնական ուղեցույցները և ընթացակարգերը, ինչպես նաև համաձայնեցված Ծրագրի գործողությունների պլանը, այդ թվում, inter alia՝ Ծրագրի գործողությունների և մանրամասն Ծրագրային ծախսերի սահմանումը, Ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի նվազեցման միջոցառումներն ու փաստաթղթերը, Ծրագրի համար կիրառելի ֆինանսական կառավարման, աուդիտի և գնումների արձանագրություններն ու չափորոշիչները, Հակակոռուպցիոն ուղեցույցներին համապատասխանելու արձանագրությունները, Ստուգման արձանագրությունները, որոնք համաձայնեցվել են Բանկի հետ՝ մասհանման հետ կապված ցուցանիշի (այսուհետ՝ ՄՀԿՑ) և դրանց համապատասխան մասհանումների հետ կապված արդյունքների (այսուհետ՝ ՄՀԿԱ) ձեռքբերումը գնահատելու համար, Ծրագրի բողոքարկման մեխանիզմը, ինչպես նաև դրա հետ կապված արձանագրությունները և ընթացակարգերը՝ բողոքների քննարկման և զեկուցման համար, մշտադիտարկման և գնահատման պահանջները, այդ թվում՝ Ծրագրի ստուգման համակարգերը, և ցանկացած այլ տեխնիկական և կազմակերպչական պայմանավորվածություն և ընթացակարգ, որոնք կպահանջվեն Ծրագրի համար (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),

• զգալիորեն և (կամ) էականորեն չփոփոխել, չվերանայել, չհրաժարվել, չեղյալ [illegible]րել կամ չկասեցնել Ծրագրի գործառնությունների ձեռնարկի որևէ դրույթ՝

առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության (Հավելված 2, բաժին I, կետ «Բ», ենթակետ 2),

• ոչ ուշ, քան Ուժի մեջ մտնելու ամսաթվից վեց (6) ամիս հետո նշանակել անկախ ստուգող մարմին և այնուհետև Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում վարել դրա աշխատանքը, որը փորձառու է, որակավորված և գործում է Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի համաձայն (Անկախ ստուգող մարմին), որպեսզի այն իրականացնի ՄՀԿՑ-ների/ՄՀԿԱ-ների ձեռքբերման ստուգումը Համաձայնագրի հավելված 2-ի IV Ա.2 բաժնի աղյուսակում սահմանված կարգով, և առաջարկի համապատասխան հատկացումներ, որոնք պետք է կատարվեն համաձայն այդ բաժնի, և ապահովի, որ Անկախ ստուգող մարմինը ՄՀԿՑ-ների/ՄՀԿԱ-ների ստուգման գործընթաց(ներ)ն իրականացնի Ստուգման արձանագրություններին համապատասխան, և ժամանակին ու Բանկին բավարարող ձևով ու բովանդակությամբ համապատասխան ստուգման հաշվետվությունները ներկայացնի Բանկ (Հավելված 2, բաժին I, կետ «Գ», ենթակետ 1),

• Ծրագիրն իրականացնելու նպատակով իրականացնել Բանկի հետ համաձայնեցված Ծրագրի գործողությունների պլանը՝ համաձայն նշված Ծրագրի գործողությունների պլանով սահմանված ժամանակացույցի, ինչպես նաև Բանկին բավարարող ձևով ու բովանդակությամբ, վարել քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ վերահսկելու և գնահատելու նշված Ծրագրի գործողությունների պլանի իրականացումը (Հավելված 2, բաժին I, կետ «Դ», ենթակետ 1),

• առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության՝ զգալիորեն և (կամ) էականորեն չփոփոխել, չվերանայել, չհրաժարվել, չեղյալ չհամարել կամ չկասեցնել Ծրագրի գործողությունների պլանի որևէ դրույթ (Հավելված 2, բաժին I, կետ «Դ», ենթակետ 2),

• ապահովել, որ Ծրագրի շրջանակներում բացառվի ցանկացած գործողություն, որը, Բանկի կարծիքով, կարող է ունենալ զգայուն, բազմազան կամ աննախադեպ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի և (կամ) ազդակիր մարդկանց վրա (Հավելված 2, բաժին II, կետ «1»),

• ապահովել, որ Ծրագրի շրջանակներում բացառվի ցանկացած գործողություն, որը կներառի աշխատանքների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է յոթանասունհինգ միլիոն դոլարին (75,000,000 դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, կներառի ապրանքների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է հիսուն միլիոն դոլարին (50,000,000 դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, կներառի ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է հիսուն միլիոն դոլարին (50,000,000 ԱՄՆ դոլար) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար, կամ կներառի խորհրդատուների ծառայությունների գնումներ, որոնց արժեքը գնահատվում է քսան միլիոն դոլարին (20,000,000) համարժեք գումար կամ ավելի՝ մեկ պայմանագրի համար (Հավելված 2, բաժին II, կետ «2»),

• Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին տրամադրել յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո՝ ներկայացնելով օրացուցային կիսամյակը (Հավելված 2, բաժին III),

• անկախ Համաձայնագրի 2-րդ Հավելվածի IV Բաժնի «Ա» մասի դրույթներից՝ որևէ առհանում չկատարել նախքան Ստորագրման ամսաթիվը ձեռք բերված ՄՀԿԱ-ների հիման վրա, բացառությամբ, որ մինչև չորս միլիոն վեց հարյուր քառասուն հազար եվրոն (4,640,000 եվրո) չգերազանցող ընդհանուր գումարի առհանումները կարող են կատարվել մինչև այս ամսաթիվը, սակայն 2023 թվականի դեկտեմբերի 7-ին կամ դրանից հետո ձեռք բերված 6.1-ի ՄՀԿԱ-ների հիման վրա (Հավելված 2, բաժին IV, մաս «Բ», կետ 1, ենթակետ «ա»),

• անկախ Համաձայնագրի 2-րդ Հավելվածի IV Բաժնի «Ա» մասի դրույթներից՝ որևէ առհանում չկատարել որևէ ՄՀԿԱ-ի մասով, քանի դեռ և եթե Հայաստանի Հանրապետությունը Բանկին չի ներկայացրել բավարար ապացույցներ առ այն, որ Համաձայնագրի 2-րդ Հավելվածի IV Բաժնի «Ա» մասի աղյուսակում նշված ՄՀԿԱ-ները ձեռք են բերվել (Հավելված 2, բաժին IV, մաս «Բ», կետ 1, ենթակետ «բ»):

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում (օր.՝ ՍԴՈ-1273, ՍԴՈ-1283, ՍԴՈ-1284,

ՍԴՈ-1328 և այլն), այնպես էլ իր որոշումների կատարման վերաբերյալ նախորդ տարիների հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին՝ նշելով, որ նման համաձայնագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր բնույթը պահանջում է համաձայնագրերի կատարման նկատմամբ հստակ մշտադիտարկում, որը թույլ կտա խուսափել վարկային համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից և բացթողումներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից: Սահմանադրական դատարանը, վերահաստատելով նաև 2020 թվականի հոկտեմբերի 2-ի ՍԴՈ-1548 որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումը, ևս մեկ անգամ շեշտադրում է վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման կարևորությունը, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի պաշտոնական հայերեն թարգմանության և դրա բնօրինակ տեքստերի միջև առկա են մի շարք թարգմանչական անհամապատասխանություններ ու անճշտություններ, որոնք թեև բովանդակային առումով խնդիր չեն հարուցում Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության բացահայտման տեսանկյունից, այդուհանդերձ, կարող են որոշակի խնդիրներ առաջ բերել Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում:

Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները վերաբերելի են Ազգային ժողովի ու Կառավարության լիազորություններին, և Համաձայնագրի վավերացման նպատակահարմարության հարցը գտնվում է հիշյալ մարմինների լիազորությունների տիրույթում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴՈ-1760